ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐ

МИНИСТЕРСТВО ЗДРАВООХРАНЕНИЯ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

МИНИСТР

REPUBLIC OF ARMENIA
MINISTRY OF HEALTH

MINISTER

375001, Երևան, Թումանյան փ., 8
375001, Yerevan, 8, Toumanian Str.
Tel. 58-24-13
Fax: 78852 151097

30.08.93. № 12-120/8

Ձեր
На № 1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ՆԱԽԱԳԱՀ՝ ՊԱՐՈՆ Մ.ԱՂԲԱԲՅԱՆԻՆ

Մեծարգո պարոն Աղբաբյան

Մենք մեծ ուշադրությամբ ուսումնասիրեցինք Ձեր առաջարկը Հայաստանի Ամերիկյան համալսարանում հասարակական առողջության և առողջապահության կազմակերպման ուղղությամբ կրթական ծրագրերի հիմնադրման մասին: Իմ խորին շնորհակալությունն եմ հայտնում այդ կարևոր գործում մեզ աջակցելու պատրաստակամության համար: Անշուշտ, ամերիկյան լավագույն մասնագետների ընդգրկումը զգալի դեր կխաղա Հայաստանում վերոհիշյալ ուղղությունների զարգացման հարցում:

Միևնույն ժամանակ, կարծում եմ, կհամաձայնվեք մեզ հետ, որ նշված բնագավառները շատ սերտ շաղկապված են երկրի ընդհանուր սոցիալ-տնտեսական և առողջապահական քաղաքականության հետ և կրթական ու գործնական ծրագրերի համատեղելիությունը այդ հարցում անհրաժեշտ պայման է: Ինչպես Ձեզ հայտնի է, մենք արդեն մշակել և ընդունել ենք Հայաստանի առողջապահության զարգացման հիմնադրույթները, որը հենված է միջազգային փորձի և հանրապետության յուրահատուկ խնդիրների վրա: Մոտ մեկ տարի առաջ մենք ստեղծել ենք նաև Առողջապահության Ազգային ինստիտուտը, որպես առողջապահության կազմակերպման ու հասարակական առողջության հարցերի գծով գիտական մշակումների և մասնագետների հետդիպլոմային կրթության հիմնական օղակ: Ինստիտուտը արդեն զգալի աշխատանք է կատարել վերոհիշյալ ուղղություններում, և մեր կարծիքով, ընդհանուր նպատակների տեսակետից հարցի առավել արդյունավետ լուծումը կլիներ Հայաստանի Ամերիկյան համալսարանի և Առողջապահության ազգային ինստիտուտի ուժերի օպտիմալ համադրումը:

Երախտագիտությամբ ընդունելով Ձեր առաջարկը, հուսով եմ, որ առաջիկայում հնարավորություն կունենանք ավելի մանրամասն քննարկել համագործակցության գործնական տեսակետները:

Հարգանքներով՝ Ա.Բաբլոյան